

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՒՂԻԿՈՍԻ  
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՕՇՈՒՄԸ  
ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱՆՈՒՄ**

Հանուրեամբ տեղ կուտանք «Սիրոսի այս բիւխն մէջ՝ Ս. Էջմիածինն զրկուած նետազայ գրուրեան, զար յատկապես ամսաբերիս համար պատրաստ եւ դրկած է ականատես ներկաներէն նեղինակաւոր գրիչ մը, եւ որ այնքան հանգամանօրէն կը ներկայացնէ Եկեղ. Ընդհ. Ժողովոյ գումարման, հայութեալիս ընտրուրեան եւ օճաման, Հոգ. Դեր. Խորհրդոյ կազմուրեան վերաբերեալ եւ այլ կառեւոր մանրամասնուրիւններ։

Կը սիրենն յուսալ թէ «Սիրոս յես այսու բախտը պիտի ունենայ Մայր Արոռոյ ներքին կեանին եւ կացուրեան մասին պարբեաբար հրատարակելու նոյն պատուական գրչէն հաւասարի բղրակցուրիւններ։

Ա.

Աւզիզ երկուեկէս տարի էր անցել այն օրից, երբ յաւիտենականութեան գիրկըն անցաւ հոգեկոյս Տ. Տ. Գէորգ Ե. այդ երկուեկէս տարին տասնեակ տարբիների չափ երկար էր թւռում Հայ եկեղեցու հաւատացեալ հօտի, նուիրապեաւութեան և ազգային անցեալի հետ սրտով կապուած հայութեան համար, թէ այսուեզ եւ թէ արտասահմանում։ Ուստի եւ հոսկինալի է, թէ ի՞նչպիսի սրտատրօփ անձկութեամբ էր սպասուում նոյեմբերի 10-ը, երբ մեր կառավարութեան բարեհամ համաձայնութեամբ պիտի կատարուէր ընդհանրական Հայրապետի ընտրութիւնը։

Գիրագոյն Հոգեւոր Խորհուրդը արել էր իրենից կախուած բոլոր հնարաւորը, որպէս զի այս ընտրութիւնը մինչի համազգոյշին-եկեղեցական՝ բառի լայն եւ ժողովրդական հասկացողութեամբ եւ Հայաստանեաց եկեղեցու լաւագոյն աւանդութիւնների համաձայն։ Երկար դարերից յետոյ՝ հնարաւորութիւն էր ստեղծուած վերջուպէս, որ առանց օտար և տիրող կառավարութեան ճնշումների և միջամտութեան՝ եկեղեցու ամբողջութիւնը ի մի գումարուէր յանձնին իւր նուիրապետութեան բարձըր ներկայացուցիչների, ինչպէս Կիլիկիոյ տան Շնորհազարդ կաթուղիկոսն է, Երևանսողիմի և Կ. Պոլսոյ պատրիարքները, մեր Միութեան և արտասահմանեան ամբողջ եպիսկոպոսութիւնը, թեմիրից ընտրուած հոգեորական և աշխարհիկ դասերի պատ-

գամաւորութիւնը, եկեղեցու ընդհանրական պիտի ընտրութիւնը կատարելու, խորհութու և զարման գտնելու բարեկարգութեան, ցաւերի բուժման, կհնդանի տուաքելութեան իրագործման ուղիների մասին։

Նոյեմբերի 5-ին արգէն հաւաքուել էին պատգամաւորութեան մեծաղոյն մասը Խորհրդացին միութեան թեմերից, երեացել էին նաև Եւրոպայի թեմի ներկայացուցիչներից Լեռն կիւմիշիքետան Փարիզից, Պետրոս Տօնապետեան Լոնդոնից, Հայկ Ամարեան Ամերիկայից, Թորոս Շարմանեան Միլանից որպէս ներուսաղիմի պատգամաւորների երգման կարգը։ Ժամը 11-ին եկեղեցու նախապատրաստական զանգահարութիւնը՝ նախուպէս եղած ծանուցման համեմատ, հրաւիրում էր պատգամաւորութեան դէպի վեհարան, որտեղից հանգիսաւոր երթպիտի սկսուէր զէպի Տաճարը։ Բակը լըցուած էր խուռն բաղմութեամբ, որ եկեղել էին Երևանից, Վաղարշապատից և շրջակայ գիւղերից, կային ուխտաւորներ և հեռաւոր քաղաքներից, մինչև իսկ նոր նախիջևանից։ Պատգամաւորութիւնը Տ. Տեղակալի գլխաւորութեամբ, կարգաւորուած

ըստ աւագութեան և թեմերի, այդ օրերի արարողապետ Տ. Մատթէոս արքեպիսկոպոսի ցուցումներով, յամրաքառ իջնում էր վեհարանի աստիճաններից, և ուղղում դէպի հանգուցեալ կաթուղիկոսի շրբիմը՝ ժողովուրդը բարեպաշտ երկիւղածաթեամբ լուսում է հոգեոր երգերն ու մազթանքները և ապա հետեւում պատրաստում է աջ և ձախ գասերում նոյն կարգութրութեամբ։ Պատարագիչ Տ. Տեղակալը խօսում է համառօտ քարոզ և Հայր մեր օից տռաջ՝ բացատրելով հայրապետական աթոռի և եկեղեցու նշանակութիւնը մեր կրօնական-հոգեառ կեանքի, անցեալի մշակոյթի և մուսթեան նկատմամբ։ Պատարագից յետոյ՝ Իշման Սեղանի առաջ կատարուում է հայրապետական հանգիստուր մազթանք, և ապա պատգամաւորներին երգուցեանում է Տէր Տեղակալը և ըստ մաքուր խզի մտաց եւ պարտուցու, և առանց իրիք աշտութեան եւ անձնական ակնկալութեանց ընարելու արժանաւորագոյն անձին Ամենայն Հայոց կաթուղիկոսի և ծայրագոյն պատրիարքի բարձր պաշտօնի համար։

Հետեւալ երեք օրերը՝ երես չարթի, երեքշարթի եւ չորեքշարթի որոշուած էր հանգիստ աննել, մինչեւ բոլոր պատգամաւորները կը հաւաքուէին, կը ծանօթանային իրար եւ մտքերի չփումն իւսնենային, մասնաւոր, նոխապատրաստական աշխատանքներ կը կատարուէին Պերագոյն Հոգեօր Խորհրդի անդամների և պատգամաւորների ոմանց խորհրդակցութեամբ ժողովը կանոնաւոր զեղագարելու։ Պատգամաւորների մտաւոր զրոսանքի համար ոչ պաշտօնական կերպով որոշուած էր այդ օրերում երկու գաստիսութիւն կարգադրութիւն և Սրբութանութիւն նիւթիւնութիւն ակրօն և Սրբւեստ» նիւթիւնութիւն մասին և հագիտական արշաւանք կազմի դէպի Հոլիվասիմէի զողոտրիկ տաճարն ու Զուարթնոց մեծ աւերակները, որ յանձնարարուած էր Տ. Պարեղին արքեպիսկոպոսին։

## Բ.

Բուն ժողովն սկսուեցաւ նոյեմբերի 10-ին, առաւատեան ժամը 11-ին, վեհարանի ստվրական ընդունելութեան դաշտին, նախագահութեամբ հայրապետա-

կան Տեղակալ Տ. Խորէն արքեպիսկոպոսի, մասնակցութեամբ վաթուուն և վից պատգամաւորների։

Տ. Տեղակալը պատգամաւորութեան դիմում է հետեւալ ճառով. Անյօր զումարուած է Ազգային-Եկեղեցական ժողովը. զուք իրեւ ժողովրդից ընտրուած պատգամաւորներ եկել էք Մայր Աթոռ կատարելու ձեր բարոյական պարտականութեամբ հանգէպ Մ. Սթոսի և հայ ժողովրդի Ցուում ենք, որ արտասահմանի պատգամաւորների թիւը զանազան պատճառներով չտա պահաս է։ Պարտաք ենք համարում յայտնել, որ Խորհրդային կառավարութեան կողմից արտասահմանի պատգամաւորներին ուսուրգել վիզէ տալու համար պատշաճ իւր ժամանակին կատարուած է եկել։ Գերազոյն Հոգեօր Խորհրդի կողմից ուրախութիւն և ոզգոյն յայտնելով պատգամաւորներին, յայտարարում եմ Ազգային-Եկեղեցական ժողովի բացումը։ Ապա Տ. Տեղակալի տաջաջարկութեամբ Ժողովականները ոտքի են կանցնում ի յարգանս հանգուցեալ հայրապետի յիշտատակին և լուսում են «Հոգւոյ հանգուցելոյն» և «Յրիստոս Որդի Աստուծոյն մազթանքները»։

Նախագահի առաջարկութեամբ ընտրուում է ատենապետութիւն և քարտուզարթիւն երեքական թուով. ատենապետներ՝ Ստեփան Մալիսանեան, Գեղամ Տէր-Պետրոսին եւ Լեռն Կիւմիչեկերտան. քարտուզարեներ՝ Կանայիշան Ստեփան, Ռուբէն աւագ քահանայ Բէկգիւլեան և Գիւլաղարեան Կոստանդին։ Ատենապետ Մալիսանեանի առաջարկութեամբ ընտրուում է և «մանգատացին» յանձնամուզով չորս հոգուց քաղկացած։ Տ. Մատթէոս արքեպիսկոպոս, Սահակ աւագ քահ. Սահակիան, Երուանդ ա. քահ. Նալբանդեան, Յովսէփ Տիգրանեան, ստուգելու պատգամաւորների փաստաթղթերը։ Ընդհատուում է նիստը մէկ ու կէս ժամով՝ մինչեւ վերստուգութեան կատարուումը։

Ժողովի կրկին զումարուելուց յետոյ՝ յանձնամուզովի նախագահ Տէր Մատթէոս արքեպիսկոպոս յայտարարում է վերստուգութեան հետեւանքը, Տ1 ձայներից միայն երկուսը կարօտ են քննութեան՝ Տօնապետեան Պետրոսը ճանապարհին կորցրել է իւր յանձնարարական թղթերը, իսկ կա-

լի Փորնիայի ներկայացուցիչ կարապետ Արդարականը դեռ չի երեացել իւր թղթերով։ Սացանից Տօնապետեանը միայն յետագայում իրաւունք ստացաւ մասնակցելու ժողովներին Եւրոպայի թեմի պատգամատքների վկայութեամբ։ Պատգամուորներից ոմանք ունեն մի քանի ձայներ։ ժողովը որոշեց ընդունել եկեղեցական հաստատութեանների և թեմակալ առաջնորդների ձայների փոխանցումը, իսկ անհաստական ձայներինը ոչ՝ այսինքն բացակայ եպիսկոպոսների և պատգամատքների, որոնք գտն չէին կարողացել։ Բատայում Տ. Տեղակալն ուներ բացի իւր ձայնից և կիլիկիոյ տան կաթողիկոսի, Տէր Բաղրատ որբեպիսկոպոս։ Երուսաղէմի պատրիարքի և Պարսկա-Հնդկաստանի Հոգեկոր ներկայացուցիչի, Տ. Պարիզին արքեպիսկոպոս։ Երուսաղէմի միարանութեան և Ռումանիոյ առաջնորդութեան, Տէր Մատթէոս եպիսկոպոս Ինձէւան՝ Յունաստանի առաջնորդութեան, Երուանդ Շահագիզ՝ Ռումանիոյ թեմի։

Այսուհետեւ քննութեան հնթարկուեցան և ընդունուեցան ժողովի զբաղման կամ օրակարգի խնդիրները։

1. Արոշումն Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան եղանակի։

2. Գերագոյն Հոգեւոր Խորհրդի գեկուցումներ՝ ա) Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հաստատութեան և զործունէութեան մասին, բ) Մ. Աթոսի նիւթական կարիքների մասին, զ) Հայտաստանեաց Եկեղեցու սահմանադրութեան մասին։

3. Զեկուցումն Հայաստանեաց Եկեղեցու բարեկարգութեան մասին։

4. Ծնտրութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսի։

5. Ծնտրութիւն Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամների։

6. Ազգոյն և գոհունակութիւն Ազգացին-Եկեղեցական ժողովի կողմից Խորհրդագլուն Հայտաստանի կառավարութեան։

Կազմուկերպչական և ձեւական այս անհրաժեշտ որոշումներից յետոյ՝ Տ. Տեղակալը կարգաց Գերագոյն Հոգեւոր Խորհրդի զեկուցումը ութամեաց զործունէութեան մասին, յայտնելով և Խորհրդի հրաժարականը՝ համաձայն հանգուցեալ կաթողիկոսի նկատմամբ։ Ա. Աթոսի 1924 թ. N 1 կոնդակի։ Մաքերի փո-

խանակութիւնից յետոյ՝ ժողովը յանձնաւարում է ատենապետութեան կազմի բանաձեւ և բերել հաստատութեան։

Նոյեմբերի 10-ին երեկոյեան ժամը Կօթու կէսին զումարում է երկրորդ նիստը ատենապետութեամբ Գեղամ Տէր Պետրոսեանի։ Ատենապետութիւնը ժողովի հաստատութեանն է Ենթարկում հատեւեալ բանաձեւը Գերագոյն Խորհրդի հաստատութեան և զործունէութեան զեկուցման մասին։

1. Ազգունել Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հիմնումը և հոււանութիւն տալ 1924 թուի յունուարի 1-ի հայրապետուկան կոնցիլին, որով հիմնումը է այդ խորհուրդը։

2. Հաւանութիւն տալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի զործունէութեան՝ նրա հիմնման օրից մինչեւ այսօր։

3. Բնդունել Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ներկայ կազմի հրաժարականը՝ ըլնորհակալութիւն յայտնելով նրա ըրջահայեց և զատակաբ զործունէութեան համար, խնդրելով այդ պաշտօնը առժամանակ շարունակել մինչեւ նոր կազմի ընտրութիւնը ներկայ պատգամաւորական ժողովի կողմից։

Ապա Տէր Պարիզին արքեպիսկոպոս կարգում է Հայոց Եկեղեցու սահմանադրութեան նախազծի, իսկ Տ. Մատթէոս արքեպիսկոպոս։ Մ. Աթոսի տնտեսուկան կարիքների մասին։ Արքան և հետաքրքրական լինին այս զեկուցումները, ինչպէս և նախընթացը մեր արտասահմանեան հայութեան համար, բնականաբար, չենք կտրող մէջ բերել իրենց ընդարձակութեան պատճառով, բաւականանում ենք միայն նրանց մասին եղած վճիռներով կամ եղարկացութիւններով։

## Գ.

Նոյեմբերի 11-ին առաւտեան նիստին կարդացում են ատենապետութեան կազմած բանաձեւները Ատենապետութեան եւ Մ. Աթոսի նիւթական կարիքների մասին եղած զեկուցումների նկատմամբ։

ա) Ազգային Եկեղեցական ժողովը լսելով Գերագոյն Հոգեւոր Խորհրդի զեկուցումը Հայոց Եկեղեցու նոր սահմանադրութեան մասին՝ որոշում է։

Յանձնալրաբել կիհնդրունական Հոգեոր  
քարձրագոյն իշխանութեան կաղմել յա-  
տուկ մասնաժողով հմուտ անձերից և նը-  
րան յանձնել մշակել նախազիծ Հայոց ե-  
կեղեցու նոր Սահմանադրութեան, ելակէտ  
ունենալով միք եկեղեցու աւանդական ըն-  
տրողութեան սկզբունքը, կանոնական ճա-  
նապարհով եկեղեցական դործերի կառա-  
վարութեան մէջ մուծուած բարեփոխու-  
թիւնները և ժամանակակից իրաւակար-  
գերը: Այս նախազիծը հազորդել Յանձ-  
նիլիկիոյ կաթողիկոսին և Երևանազէմի ու-  
ղ. Պոլսի հայոց պատրիարքներին և լ. Նը-  
րակատի առնելով նրանց դիմողութիւնները,  
հաստատել հայրապետական կոնդակով և  
մտցնել գործադրութեան մէջ, իսկ առա-  
ջիկայ միքաւորագոյն Ազգային-Եկեղեցա-  
կան ժողով գումարուելիս՝ առաջարկել նը-  
րան վերջնական քննութեան և հաստա-  
տութեան: Նոյն գեկուցման տոթիւ Տ.  
Արակն հոգիսկոզոսն առաջարելով այդ  
բանաձև, բայց ժողովը համարելով այդ  
աւելի մեր պատմական օսխեմո, քան բա-  
նաձև, օրոշեց իրեմ նիւթ մտցնել արձա-  
նագրութեան մէջ և յանձնարարի ապա-  
գայ Սահմանագրութեան յանձնաժողովի  
ուշադրութեան:

բ) Ազգային-Եկեղեցական ժողովը լոե-  
լով Քերագոյն Հոգեոր Խորհրդի գեկուցու-  
մը Մայր Աթոռի նիւթական կարիքների  
մասին, որոշում է.

1. Ճանաչել Մ. Աթոռի նիւթական պի-  
ճակը միանգամայն անապահով նրա եկա-  
մուտների պակասութեան պատահական  
բնոյթի պատճառով:

2. Ժողովը պարագ է գնում միութե-  
նական և նամանաւանդ արտասահմանեան  
թեմերի եկեղեցիների, առաջնորդների և  
հայ համայնքների վրայ հոգալ պարերա-  
կան նպաստներով Մայր Աթոռի բազմա-  
տեսակ կարիքները՝ նրան արժանավայել  
դիրք տալու նպատակով:

3. Մ. Աթոռի կարիքների վերայ ժո-  
ղովը հրաւիրում է Տանն Կիլիկիոյ կաթո-  
ղիկոսի, Երևանազէմի և Կ. Պոլսի պատրի-  
արքների առանձին ուշադրութիւնը:

4. Յանձնարաբել Գերագոյն Հոգեոր  
Խորհրդին՝ քննութեան առնել և հնարաւո-  
րութեան չափով իրագործել հաստատուն  
եկամուտների ազգիւրներ ստեղծելու մի-

ջոցները, ինչպէս են կամտառը տուրք սահ-  
մանելը, մօմավաճառութիւն և այլ հնա-  
րաւոր միջոցներ:

Այսուհետեւ ժողովը անցնում է օրու-  
կարգի երրորդ հարցի քննութեան, այն է  
Հայոստանիայց եկեղեցու բարեկարգու-  
թեան, որի մասին զեկուցում է կարգում  
Տ. Դէորդ արքեպիսկոպոս Գերագոյն Հո-  
գեոր Խորհրդի կողմից: Յայտնում են  
նաև Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի, Երու-  
սաղէմի Ս. Պատրիարքի և Միաբանու-  
թեան կարծիքները բարեփոխութեան խըն-  
դրի նկատմամբ իրենց ներկայացուցիչների  
կողմից: Տ. Դէորդ արքեպիսկոպոսի զե-  
կուցման հիման վերայ ժողովը հաստա-  
տում է նախ հանգուցեալ կաթողիկոսի  
հինգ կանոնական կոնդակները. ա) Քո-  
հանաների կրկնամուսութիւնը (թ. 644.  
նոյեմբ. 11. 1922). բ) Ազգակցական հին-  
գերորդ և խնամէական չորրորդ աստիճա-  
նի և հոգեօր ազգակցութեան կնքահօր և  
սահունակ ամուսնութեան արդիքի վերա-  
ցումը (թ. 645, նոյեմբ. 11. 1922). գ) Նոր  
տոմար մացնելու (Ն 349, նոյեմբ. 9. 1923).  
դ) Երգեհօնի գործադրութեան (թ. 350,  
նոյեմբ. 3. 1923) և վերջապէս ե) Հայաս-  
տանեայց եկեղեցու ընտրութեան սկզբուն-  
քի վերահստատութեան, թեմուկան խոր-  
հուրդների և առաջնորդների նկատմամբ  
(թ. 678, 1917): Երկրորդ կոնդակի՝ կըն-  
քահօր և սահունակ վերաբերութեամբ ե-  
ղած խնդիրը ժողովը լուղունում է ժամա-  
նակաւոր, հարցը առկախ թօղնելով մինչեւ  
յիտագայ Ազգային-Եկեղեցական ժողովի  
նոր Սահմանադրութեան հաստատութիւնը:  
Իսկ ինչ վերաբերում է բարեփոխութեան  
միւս խնդիրներին, ժողովը յանձնարարում  
է բարձրագոյն հոգեօր իշխանութեան՝ մաս-  
նագէտների ձեռքով յարուցուած հարցերը  
ուսումնասիրել, ապա Տանն Կիլիկիոյ կա-  
թողիկոսի, երկու պատրիարքների կար-  
ծիքները լսելուց յետոյ անհրաժեշտը հը-  
րատարակել կանոնական կոնդակով, իսկ  
մեացոծը պահել ի վերջնական հաստատու-  
թիւն յիտագայ Ազգային-Եկեղեցական ժո-  
ղովի:

Ժողովի զբաղման ընթացքում ներս է  
մտնում Մանչստրի Հայոց հոգեօր հովիւ  
Տ. Պատմէոս եպիսկոպոս Խնձէետն, միակը  
արտասահմանի եպիսկոպոսներից, որ եկել

էր անձամբ մասնակցելու ընտրութեան գործին իւր անհատական ձայնով։ Ասեանապետ Մալլասանեանը ընդհատելով զրադամունքը, ողջունում է նորա զարուստը. որպէս պատասխան Տէր եպիսկոպոսն արտասանում է մի ջերմ և ոգեսորութեամբ լի ճառ, որ համակում է բոլոր ունկնդիրներին նոյն զգացումով։

Նոյեմբերի 11-ին երկոյեան նիստում  
որոշվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի  
ընտրութեան եղանակը, թե նիստավուների  
ընտրութիւնը կատարել թերթիկներով, իւ-  
րաքանչիւր ձայնի համար միայն մի անուն  
գրելով. իսկ վերջնական ընտրութիւնը  
տուփերով: Ժողովը անհրաժեշտ է համա-  
րում Գերագոյն Հոգեոր Խորհրդի պայու-  
թիւնը՝ նախագահութեամբ Ամենայն Հա-  
յոց կաթողիկոսի, բաղկացած չորս հոգեո-  
ռականներից, որոնց ընտրում է Ազգային-  
Եկեղեցական ժողովը, և երկու աշխարհա-  
կաններից, որոնց հրատիրում է այդ կաղ-  
մը՝ ներկայ ժողովին մոտնակցող աշխար-  
հական պատգամաւորներից՝ հաւասար ի-  
րաւունքով. հոգեորականների կազմից  
զուրս եկող անդամների տեղ մնացածները  
ընտրում են նոր անդամ հոգեօրականնե-  
րից գարձեալ հաւասար իրաւունքով:

Նոյն նիստում, Ազգային-Եկեղեցական  
Ժողովը յանձնարարում է Գերագոյն Հո-  
գոսը Խորհրդին՝ իւր նախագահ Վեհափառ-  
կաթողիկոսի միջոցով միջնորդութիւն յա-  
րուցանել Խորհրդային Հայոստանի կոսու-  
վարութեան առաջ՝ բաւարարութիւն տա-  
լով Հայոց եկեղեցու անհրաժեշտ և անյե-  
տաձգելի կարիքներին, այն է իրագործել  
հոգեսր դպրոցի բացումը Հայոց եկեղեցու  
պաշտօնեանել պատրաստելու համար, ու-  
նենալ պարբերական տմառթերթ՝ իրրե-  
սրգան Ս. էջմիածնի բարձրագոյն հոգեսր  
իշխանութեան, ստեղծել հկամատի հաստա-  
տուն աղքիւրներ Ս. էջմիածնի Տաճարի և  
միաբանութեան պահպանութեան, բացու-  
միք դպրոցի և պարբերական օրգանի ծախ-  
սերի և եկեղեցական պաշտամունքի զբր-  
քերի տպագրութեան համար:

۹

Նոյեմբերի 12-ին Ազգային-Եկեղեցական ժողովը հանդիսաւոր նիստը պիտի

բուժմարուի Տաճարում, Խջման սեղանի առաջ՝ կատարելու Ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութիւնը։ Բոլոր պատգամաւորները նախապէս եղած ազգարարութեան համաձայն ժամը 11-ին հաւաքում են Վեհարան և պատրաստում հանդիսաւոր երթի գէպի Տաճարը, նոյն կարգաւորութեամբ ինչպէս առաջ նկարագրուեց։ Այսօր մեծ է ժողովրդի բազմութիւնը, որ շարուած ճանապարհի երկու կողմից հանդարսու ողջունում է և յաջողութիւն բարեմաղթում։ Տաճարի մէջ արեւմտեան կողակի մօտ զրուած է ժողովի նախագահի՝ Տէր Տէղեկալի աթոռը, առաջին սեղան։ Նորա երկու կողմից շարուած են Գերազոյն Հռոգեսր խորհրդի անդամները և ապա միւս պատգամաւորները նախապէս որոշուած տեղերում։ Փակւում են Տաճարի գաները, որպէս զի ոչ մի հաղորդակցութիւն չլինի մինչև ընտրութեան վերջը։ պատգամաւորների ընդհանուր թիւը 72 է, ութուն ձայնով։ Այս նիստի օրակարգի խնդիրներըն են ա) Ամենայն Հայոց կարողիկոսի եւ բ) Գերազոյն Հոգեւոր խորհրդի անդամների թիւնորիներ։

Տ. Տեղակալի տուած նշանի համաձայն՝  
ստքի ևն կանգնում բոլոր պատգամաւոր-  
ները, առում եւ կարգացում են բոլոր  
աղօթքներն ու սաղմաները ըստ պատշա-  
ճին. առաջ Տ. Տեղակալը ընտրութեան և-  
ղանակի մասին եղած որոշումը յիշեցնելուց  
եւ յաջողութիւն մաղթելուց յիշոյ բա-  
ցուած է յայտարարում ժողովը։ Այսօր  
ժողովի զեկույարը միայն նախագահն է,  
առենապետութեան անդամներն ու քար-  
տուղարները օգնում են միայն տէխնիքա-  
կան աշխատանքներում. բաժանում են  
թերթիկներ պատգամաւորներին՝ իրենց  
ձայների թուի համեմատ, իւրաքանչիւր  
թերթիկի վերայ միայն մի անուն կարող է  
զրուել։ Կարգացում են Հայոց եկեղեցու  
բոլոր եպիսկոպոսների անունները, որոնք  
բոլորն էլ տեսականապէս իրաւունք ունին  
իրենց թեկնածութիւնը զնել։ Տէր Տեղա-  
կալը յայտնում է, որ Երուսաղէմի եւ Կ.  
Պոլսի պատրիարքները նախապէս խնդրել  
են իրենց չքուէարկել. Նոյնը խնդրում է  
և Տ. Բագրատ արքեպիսկոպոս։ Եօթանա-  
սունելիննը ձայնից (Արշակ Զօպոնեանը  
քուէարկութիւնից յիշոյ միայն հասաւ և

եկեղեցի մտաւ) Խորէն արքեպիսկոպոսն ստանում է 51 ձայն, Մատթէոս արքեպիսկոպոս 12, իսկ Մեսրոպ արքեպիսկոպոս 10 ձայն, Բագրատ արքեպիսկոպոս 2, և մի մի ձայն թորզով, Գարեգին եւ Գէորգ արքեպիսկոպոսները: Բայց Խորէն և Մատթէոս արքեպիսկոպոսներից, մնացածները հրաժարում են քուէարկութելուց:

Կէս ժամ ընդմիջումից յետոյ՝ կատարում է երկրորդ եւ վերջնական քուէարկութիւնը. Նախապէս որոշուած էր տուփերով կատարել այս քուէարկութիւնը, բայց տուփերի անյարմարութեան պատճով, կատարուում է զարձեալ թերթիւնը: Այս անդամ վարսուն ձայն ըստանում է Տ. Խորէն արքեպիսկոպոս և 19 ձայն Տ. Մատթէոս արքեպիսկոպոս: Նաշխագահը յայտարարում է քուէարկութեան արդիւնքը:

Ամէնքը ոտքի են կանգնում, Տէր Մեսրոպ արքեպիսկոպոս, իրեւ աւագաղոյն եպիսկոպոս, չնորհաւորում է նորընտիր Հայրապետին. հոգեօրական եւ աշխարհական պատգամաւորները համբուրում են ընտրեալի աջը, որ յուղուած իւր նորհակալութեան խօսքն է ասում և խնդրում առողջի, որ Աստուած կարողութիւն տայ ժողովի կողմից իւր վերայ զրուած ձանր պարաքը սրբութեամբ կատարելու: Զանգակի երեք անդամ հնչիւնը աւետում է զրոխ ժողովրդեան ընտրութիւնեան արդիւնքը, կեցցէների և ուրախութեան աղաղակների բացականչութիւնները համառւմ են ժողովականների ականջին, յուղելով ամսնքին ուրախութեան զգացմունքով:


Այս ընդմիջումից յետոյ՝ գումարում է երկրորդ նիստը Գերազոյն Խորհրդի անդամների ընտրութեան համար. ութեան ձայնից 63 ձայն ստանում է Պարեզին արքեպիսկոպոս, 52 ձայն Գէորգ, 50 Մատթէոս, 44 Մեսրոպ, 43 Բագրատ արքեպիսկոպոսները, 22 Արտակ, 14 Արսէն եպիսկոպոսները եւայլն: Բայտ այսմ ընտրուած պիտի լինէին առաջին չօրսը, բայց Տ. Տ. Մեսրոպ, Մատթէոս նաև Բագրատ արքեպիսկոպոսները հրաժարում են, խստանալով իրենց պատրաստակամ աշակցութիւնը նորընտիր Հայրապետին: Ժողովը ընտրուած համարելով Պարեզին արքեպիսկոպոս՝ իրեւ նորընտիր Գերազոյն հոգեօր Խորհրդի աւագաղոյն ան-

կոպոսներին, կրկին քուէարկութեամբ ընտրեց երկու հոգի ևս՝ Տ. Տ. Արտակ և Արտէն եպիսկոպոսներին, որով լրացաւ Գերազոյն Հոգեօր Խորհրդի չորս հոգեօրական անգամների թիւը:

Նորընտիր Հայրապետը ժողովը փակուած յայտարարելուց յետոյ՝ բոլոր պատգամաւորները կարգուեուում են գուրս գաւառու Տաճարից եւ նորընտիր Հայրապետին առաջնորդելու գէպի Վեհարան և Նրանց խմբովին երգած «Էջմիածինն» ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» շարականի հետ խառնում էլին հաղարաւոր հաւատացեալ ժողովրդի կեցցէների, ուրախութեան եւ բարիմազթութեան բացականչութիւնները, վանքի բուրոր զանգերի աւետաւոր զօգանչիւնը. իսկ նորընտիր Հայրապետը, ըրջապատուած ժողովրդի յորձանքից պաշտպանով պատգամաւորներով և եպիսկոպոսներով, խորապէս յուղուած, աչքերը խոնարհում յամբաքաց հետեւում է հանգիստաւոր երթին, աջ և ձախ օրնելով իրեն ողջօւնող ժողովրդին:

## Ե.

Ամբովզ պատգամաւորութեան և միաբանութեան միասիրտ ցանկութեամբ նորընտիր Հայրապետի օձումն էլ պէտք է կատարուէր հէնց հետեւեալ օրը, նոյեմբերի 13-ին որ կիւրակի էր: Այս ևս ժամանակ չկար բեմում զրուած սեասքող հայրապետական աթոռի սղոյ բարձման արարողութիւնը և նոր հայրապետի հնուան առաջին յիշատակութիւնը յատուկ պատարագով եւ հանդիսաւորութեամբ կատարել, այլ նոյն երեկոյեան ժամենքութեան ժամանակ «Աստոցուք»-ից առաջ՝ կիւրակի առաւտուեան ժամը 11-ին ամբովզ պատգամաւորութիւնը և միաբանութիւնը զգեստաւորուած սպասում էր գէնէի երեալուն՝ գէպի Տաճար առաջնորդելու. գէնէի յատուկ ցանկութեամբ ամպհովանի և այլ հանդիսաւորութեան պարագաներ չկային: «Հրաշափառ» և «Ուրախ լիր» ու եկեղեցիք շարականներով հայրապետին առաջնորդուեցաւ գէպի Տաճար. այսուհեղ՝ իջման սեղանի առաջ՝ սովորական սնւրախ եղէ ես սազմոսից յետոյ՝ Տ. Պարեզին արքեպիսկոպոս՝ իրեւ նորընտիր Գերազոյն Հոգեօր Խորհրդի աւագաղոյն ան-



ԽՄԲԱՆ ՆԱԱՐ ԱԶԳԱՅԻՆ - ԵՎՀՅԵՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՂԱԾՔ

դամ՝ մատոյց հայրապետական զաւադանն ու խաչը պատշաճ համառօտ խօսքով եւ բարեմաղթութեամբ։ Ս. Հայրապետը Պահպանիչ ոով ժողովրդին և պատգամաւորութեան օրհնելուց յետոյ՝ ծունկի խոնարհեց իջման սեղանի և Աւետարանի ու Խաչի առաջ և գլխարաց լուելեայն աղօթեց։

Ապա եպիսկոպոսական ամբողջ դասը առաջնորդեց նորընտիր Ս. Կաթուղիկոսին Ս. Գէորգայ խորանը զգեստաւորուելու, նորա հետ զգեստաւորուեցան և 12 եպիսկոպոս, որոնց ձեռքով և պիտի կատարուէր օծման կարգը։ Պատարագիչը ինքն էր՝ նորընծայ կաթուղիկոսը, որ հանդիսաւոր ելքից և աւագ սեղանի առաջ լուացման արարողութիւնը կատարելուց յետոյ, տասն երկու զգեստաւորուած եպիսկոպոսների առաջնորդութեամբ բարձրանում է սեղան մատուցանելու Ս. Պատարագը, որ կատարուէմ է մինչև օջի ողորմած և մարդասէր ես Աստուած զոլով։ Այսուղ ընդհատում է Պատարագը և նորընծան ծունկ է չոքում սեղանի առաջ, երեսը գէպի ժողովուրգը, ձեռքերը աղօթողի կերպով վեր բարձրացրած։ զգեստաւորուած եպիսկոպոսները շրջապատում են նորան եւ սկսում է ձեռնադրութեան կարգը։ Յուղիչ է և սրտաշարժ յատկապէս երկու տեսարան։ առաջին՝ երբ ՅԱստուածային եւ երկնային շնորհա երգից և մաղթանքից յետոյ՝ բոլոր եպիսկոպոսները ձեռները դնում են Ս. Հայրապետի զլիխին և միասին աղօթում։ ԱՄեք զնեմք ձեռս ի վերայ սորա և գուք ամենն քեան աղօթս արարէք . . . ։ Աղօթում է ինքը Հայրապետը, աղօթում են ձեռնադրող եպիսկոպոսները և հրաւիրում հաւատացեալ ժողովրդին աղօթելու, որ Աստուած արժանաւոր կացուցանէ նորան կաթուղիկոսութեան սրբազան կոչման։ Երկրորդ՝ ԱՊՀԾՈՂՆԵ-ից առաջ բուն օծման կարգն էր կատարուում։ աւագագոյն եպիսկոպոսը Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս ըստանալով միւռոնակիր եպիսկոպոսից աղաւնին, թափում է ս. միւռոնը նորընծայի գագաթիւն «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երդակցութեամբ և բոլոր եպիսկոպոսներն իւրից բութ մատներով ճառագայթածե խաչ են նկարում նորընծայի գագաթին, ասեւով։ Օրհնեսցի, օծցի և սրբեսցի գագաթ Տէր Խորէն կաթուղիկոսի, ենոյ։ Շատերի

աչքում արտասուք է երեսում, և ժողովուրգը, որ ծայրէ ի ծայր լցրել է եկեղեցին, ծովի յորձանքի նման տատանուում է սրտով, հոգւով և յառած աչքերով մասնակից լինելով կատարուող սրբազան արարուղութեան։ Ապա Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս լուսարարապետի պաշտօն կատարող Տ. Արիստակէս եպիսկոպոսից ստանալով հայրապետական քողը, ձգում է զմին, կապում կոնքեսը, ձեռքը տալիս հոգուապետական զաւազան ի նշան նորա բարձրագոյն, առաքելական իշխանութեան։ Այս բոլորից յետոյ ձեռնադրող եպիսկոպոսները համբուրում են օծեալի գագաթը և ողջոնը հազորդում ըստ կարգին։

Պատարագից յետոյ՝ պատգամաւորութիւնը, միաբանութիւնն ու զպիլները, երգչական խումբը ՅՀրաշափառ Աստուած» շարականով եւ նոյն հանդիսաւորութեամբ նորընծային առաջնորդեցին Վեհարան։ Ժողովրդի ողերութեան, ցնծութեան աղաղակներին և ոռվացիաներին» չափ ու սահման չկար։ Մեծ ջանք և աշխատանք պէտք էր գործադրել՝ նորընծայ հայրապետին պաշտպանելու եւ թափորը կարգաւորութեամբ շարունակելու համար։ ամէնքը կամենում էին տեսնել, համբուրել աջը, քըզանցքները, ծունկ չոքել առաջին օրհնութիւնը ստանալու։ Վեհարաննում նորընծան առաջնորդուեցաւ «ծաղկեայ» զահլիճը, բազմեցւելով հայրապետական աթոռի վերայ, և Այսօր քահանայապետ ճշմարիտ շարականը երգելով։ Հանդէսը վերջացաւ։ Հայրապետի «Պահպանիչ» ոով և օրհնութեամբ եւ ներկաների՝ նորապսակ կաթուղիկոսի աջը համբուրելով։

Կարգազրիչ Յանձնաժողովի հսկողութեամբ այդ օրը պատրաստուած էր հանդիսաւոր ճաշկերոյթ պատգամաւորութեան, միաբանութեան և պատուաւոր հիւրերի համար, մօտաւորապէս 200 հոգու։ Առհասարակ Յանձնաժողովը՝ նախազահութեամբ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի և անդամութեամբ Արտակ և Վ. Բիթանէս եպիսկոպոսների, մեծ աշխատանք է ունեցել պատգամաւորների ընդունելութեան, նրանց ընակարանի եւ սննդեան կանոնաւորութեան նկատմամբ։ բայց նախամտածուած կարգաւորութիւն էր նկատուում յատկապէս ընտրութեան և օծման

օրերին, որոշուած էր ամենքի նստելու տեղը, որոշուած էր բաժականառերի կարգն ու խօսողների անձնաւորութիւնները։ Օժման օրը բարձր ամբոխնի վերայ առանձին սեղան էր պատրաստուած եւ նորապատկ Հայրապետի համար։ Պատգամաւորներն ու բոլոր սեղանակիցները նստած իրենց տեղերում՝ սպասում էին վեհի զալստեան։ Երբ ներս մտաւ իւր Հքախմբով, ամենքը ոտքի կանգնած՝ զլուխ են խոնարհեցնում իրենց ողջոյնն ու յարգանքը յայտնելով։ Սեղանի օրնութիւնից յետոյ՝ բազմում է Հոգեոր Տէրը իւր աթոռի վերայ։ յետուում կանգնած է զաւագանակիրը՝ բարձր բոնած հայրապետական սովորական զաւագանը։ սեղանի երկու կողմից կանգնած են մի մի սպասաւորով վարդապետներ, առաջակողմը կարմրազգեստ «շամփիները» գնդակագլուխ զաւագաններով։ Առաջին բաժակը լինի պատգամաւոր Արշակ Զօպաննեան առաջարկում է նորապատկ Հայրապետի արևշատութեան և բարգաւաճման, երրորդ բաժակը Ա. Հայրապետն առաջարկում համար։ Երկրորդ բաժակը Ս. Հայրապետը առաջարկում հայ ժողովրդի, իւր հաւատացեալ հօտի բաղդաւորութեան։ չորրորդ բաժականաւոն արտասանուում է Փարիզի պատգամաւոր Լեւոն Կիւմիւշկերտանի կողմից։ Մայր Աթոռի և նորա միաբանութեան հաստատութեան և պայծառութեան համար։ Հինգերորդ բաժակն առաջարկում է Տ. Փարիզին արքեպիսկոպոս՝ որպէս պատասխան վերջին կենացի՝ պատգամաւորութեան կենացը։ Ս. Հայրապետի խօսելուց առաջ ձայնեղ քահանաներից մէկը մօտեցած նորա սեղանին երգում է «Օրհնեա Տէր», և ամենքը ոտքի են կանգնում լսելու Հայրապետի օրհնութեամբ և բարեմաղթութեամբ ցօղուած խօսքերը։ Իւրաքանչիւր բաժականաւորից յետոյ՝ երգուում է պատշաճ երգ ձայնաւոր երգիչների կողմից երգեհոնի նուագակցութեամբ։ Սեղանակիցների տրամադրութիւնն ու ոգեսորութիւնը բարձրանուում է հետզհետէ և համակում ամենքին։ ոտքի է կանգնում Ա. Հայրապետը, ոտքի են կանգնում ամենքը։ օրհնում է նա ամենքին և բարձրանուում եպիսկոպոսների ուղեկցութեամբ իւր Վեհարանը հանգստանալու։

## Զ.

Սորանով վերջացած էր տօնակատարութիւնը, բայց վերջաւորուած չէր դեռ ևս Ազգային-Եկեղեցական Ժողովի զբաղմունքը։ նա մի վերջին պարտք ևս ունէր կատարելու, իւր չնորհակալութեան խօսքն ասելու հանդէպ Հայաստանի Խորհրդային կապավարութեան, որի բարեհամ վերաբերմունքից և ընծայած դիւրութիւններից էր կախուած մեծ մասամբ ժողովի յաջող ընթացքը։ Մեր եկեղեցական պատմութիւնը չատ յաճախ արձանագրած ունի ընտրութիւնների ժամանակ եղած բռնութիւններն ու միջամտութիւնները ոչ միայն օտար տիրող իշխանութիւնների, այլ նոյն խակ թագաւորների կողմից, ցարիզմի ժամանակ, թէ և որոշ չափով կանոնաւորուած էր ընտրութեան գործը «Պալաժենիառով», բայց հազուադէպ չէին կողմանակի ազգեցութիւններ, թողում ասել, պարտաւորութիւն էր երկու հոգի ընտրել, և կայսրը որին կամենար, նրան էլ կը հաստատէր։ Երկար դարերից յետոյ՝ Ազգային-Եկեղեցական Ժողովը իւր ազատ քուէններով ընտրութիւններում զահի վերայ։ Սա պատմական բարձրը զնահատութեան արժանի մի երեսոյի էր, որի համար Ազգային-Եկեղեցական Ժողովը երախտապարտ է մեր կառավարութեան։

Այսօրուայ երեկոյեան եւ վերջին նիստի զբաղմունքն էր մարմաւորել այն միտքն ու զացումը եւ ձեւակերպել կառավարութեան մատուցանելիք չնորհակալութիւնն ու ուղերձը։ Կարգացուում է ատենապետութեան պատրաստած գրութիւնն այս առթիւ, որ փոքրիկ փոփոխութիւններով ընդունուում է և յանձնարարուում ատենապետութեան՝ Ժողովի կողմից ներկայացնել կառավարութեան։

Նիստի վերջում երեսում է Ա. Հայրապետը, չնորհակալութիւն յայտնուում և օրհնում բոլոր պատգամաւորներին եւ նրանց ուղարկող հաւատացեալ ժողովրդին։

Ապա յայտարարուում է Ազգային-Եկեղեցական Ժողովը փակուած։

Ա. Էջմիածին

ԱԿԱՆԱՏԵՍԵԼ